

ԿԱՐՍԻՐ 5 ՄԱՐՏԻԿԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՈՒԲԱՅԻ

ԴՎԻՆԻ  
ԱՌՈՒՄԸ



ՀԱՅԱՍՏԱՆ

891.99

7251

U-93

Гиацинт

17-612412

штук

12

ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻՆԻ ԳՐԱԴՐԱՄԱՆ № 3

891.99

ՄՅԱԲԱՆ

15-93

ԱՅԹՎԱՌ է 1961 թ.

# ԴՎԻՆԻ ԱՌՈՒՄԸ

25+

A 5765



ԹԵՍԼՐԱՄ

ԵՐԵՎԱՆ

1943

МУРАЦАН  
ВЗЯТИЕ ДВИНА  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1948

## ԴՎԻՆԻ ԱՌՈՒՄԸ

Գագիկ Արծրունին մի քանի շաբաթ չարու-  
նակ հյուր պահեց յուր մոտ Արաս թաղավորին  
և, ի պատիվ նրա, նաև հրավիրյալ իշխաննե-  
րին։ Այդ բոլոր ժամանակ նա նրանց զբաղեց-  
նում էր հաճոյական դրսանքներով։ Մի օր շըր-  
ջեցնում էր յուր անառիկ բերդում և ցույց տա-  
լիս նրանց՝ նրա հրաշալիքները, բնության ու  
մարդկանց և, մանավանդ, յուր ձեռքով կերտ-  
ված ամբությունները, ահավոր մարտկոցները,  
վիմափոր անձավները՝ իրանց դադտնի ճանա-  
պարհներով, քարակոփ մատուռները և ջրալից  
ավաղանները։ Ցույց էր տալիս այդ լեռնակար-  
կառ բարձրության առաջ բացվող գեղազվարձ  
տեսարանները, որոնց վրա նայում էին նրանք՝  
բազմելով քարարլրի ծովահայաց կողերում ամ-  
ֆիթեատրաձև փորված նստարանների վրա։  
Այդտեղից երեսում էր քաղաքը յուր բազմազան

շինությաւններով, ծովակը՝ յուր գեղածութի տալքներով և ապառաժում կղղիներով. երեսում էին ծովափնյա այդիներ ու դարաստաններ, կանաչազարդ դաշտեր ու բլուրներ և կապուտակը լեռների ձյունագաղաթ գոտիներ, որոնք Բըղնունյաց ծովակը պատում էին չորս կողմից՝ Սիփանը Հյուսիսից, Արտոսը հարավից, Վարդը արևելքից և Գրդուն ու Ծնձաքիսարը արևմուտքից:

Մի ուրբիշօր նա զբունցնում էր նրանց Վանա գեղազվարն այդեստաններում, որոնք քաղաքի արևելյան կողմից սկսված տարածվում էին գեղի ծովակի հարավակողմը մի քանի ժամվաճանապարհ, ամփոփելով իրանց մեջ փոքրիկ ավաններ, շենքեր ու դյուղեր և իշխանական տմարանոցներ: Ամեն մի ուշադրության արժանի վայրում, կարկաչակոս աղբյուրների մոտ և հոգանալոր ծառերի տակ՝ նա պատրաստում էր հյուրերի համար զվարճալի խրախճություններ, համեմված ճոխ հացկերութներով ու գուսանական երգերով ու կայթերով, որոնցով մանավանդ հարուստ էր յուր արքունիքը:

Հաճախ նա առաջնորդում էր հյուրերին դե-

ալի արքայական որսարանները, որոնք դժոխվում  
էին Վարադա ապառաժուտ լանջերում, կամ ծո-  
վի հարավակողմը դժոխող անտառներում, ուր  
և էրեների առատ որսօրդությամբ զվարճաց-  
նում էր նրանց:

Երբեմն էլ նա պոտեցնում էր նրանց Վա-  
պուրականի այն վանքերը, որոնք հռչակավոր  
էին իրանց դպրությամբ կամ միարանական  
կարգավորությամբ՝ ցույց տալու համար յուր  
երկրի մտավոր ու կրոնական զարգացման հա-  
սածաղիմությունը:

Վերջապես նա յուր արքայական նախակնե-  
րով զբոսեցնում էր հյուրերին նաև Վանա ծովի  
վրա՝ այցելելով նրանց հետ միասին ծովափնյա-  
տմբաստանները և ծովի մեջ դժոխող կիմ,  
կտուց, Առտեր և մանավանդ գեղադիր ու բա-  
րեշեն Աղթամար կղզիները: Վերջինի մեջ այդ-  
ժամանակ նատում էր Հայոց ընդհանրական կա-  
թուղիկուր: Այդտեղ Գաղիկ թագավորը կառու-  
ցել էր հրաշակերտ եկեղեցի, հոյակապ արքու-  
նիք, անառիկ բերդ ու դղյակ, ուր և անցնում  
էր ամառային ամիսները: Այդ բոլորը նա ցույց  
էր տալիս յուր բարձրաստիճան հյուրերին, բա-

ցատրում էր նրանց յուր ճարտարապետական գաղտնիքները և հրճվում էր նրանց գովությունները լսելով։

Բայց այս բոլոր զբոսանքների ժամանակ Արաս արքայի ուշադրությունը դրավում էին միայն Գաղիկ Արծրունու ռազմական ամրությունները։ Նա գտնում էր, որ դրանց չնորհիվ է երկիրն աղատ մնացել թշնամու ավերումներից, չնայելով որ այդտեղ բազմիցս արշավել էին թե Յուսուփի ոստիկանը և թե նրա տեղապահները։ Թեպետ Վասպուրականը բնությունից արդեն օժտված էր գեղեցիկ ամրություններով, այնպես, որ ոչ միայն Գաղիկ Արծրունու նման բազմափորձ դինվորականը, այլև նրանից ավելի տկարմի իշխանապետ կարող էր այդ ամրությանց ապավինելով՝ ապահովել երկիրը թշնամու հարձակումներից, բայց և այնպես, Գաղիկ Արծրունին բնության տվածների վրա ավելացրել էր նաև յուր ստեղծագործությունները։ Վասպուրականի ամեն մի կիրճը, քարաբլուրն ու լեռնալանջը, վանքն ու մենաստանը նա դարձրել էր պաշտպանության վայր, ժողովրդյան ապաստարան։ Իսկ բերդերն ու ամրոցները շինել էր

անմատչելի։ Եվ ահա՝ այս պատճառով Վաս-  
պուրականի ժողովուրդն ավելի բարեվիճակ,  
վանքերն ավելի չեն, միաբանությունները բա-  
րեկարգ էին, քան թե Արարատյան երկրում։ Եվ  
Աբասն ինքն իրեն մտածում, ծրագրիներ էր  
կաղմում, որ յուր երկիրը դառնալուն պես՝ ա-  
մեն ջանք գործ դնե յուր թագավորությունը  
նույն ձևով բարեկարգելու։

Սակայն Գևորգ Մարզպետունին բոլորովին  
այլ գործով էր զբաղված։ Նախ՝ նա մտածում  
էր Արարատյան ու Հարավային իշխանապետու-  
թյանց մեջ ստեղծած միությունն հաստատուն  
կերպով ամրապնդելու և երկրորդ՝ համոզել բո-  
լոր միացած իշխաններին՝ հավաքական ուժով  
Դվինի վրա արշավելու, որպեսզի մայրաքաղաքը  
դրավելով՝ միանդամ ընդմիշտ օտար տիրապե-  
տության անհարազատ ազդեցությունը երկրի  
վրայից հեռացնե։

Այս նպատակով, ահա՝, նա շարունակ խո-  
սում, հորդորում էր մերթ Աղձնյաց ու Մոկաց  
տերերին, մերթ Այունյաց իշխաններին և հա-  
ճախ՝ Գագիկ Արծրունուն կամ արքայորդի  
Աշոտ-Դերենիկին։ Նա հարյուրերորդ անդամ

կրկեռւմ, ապացուցում էր այդ ձեռնարկության  
անհրաժեշտությունը և նրանից դալիք օգուտնե-  
րի մեծությունը թե՛ Հայաստանի ժողովրդի և  
թե՛ նույնիսկ իրենց՝ իշխանապետների համար:

Եվ նա այնքան աշխատեց, որ բոլորովին  
համոզեց՝ հինավորց մայրաքաղաքը պաշտր-  
մամբ դրավելու որոշումն անել:

Ոստիկանը նույնպես անհոգ չէր այդ ժա-  
մանակ: Նա գիտեր, որ Արասը թագավոր է պը-  
ռակվել Վասպուրականում և որ հայոց իշխան-  
ները մեծ մասամբ նրա հետ են: Եվ որովհետեւ  
ինքը անխոչեմություն էր արել՝ Աշոտ թագա-  
վորի դավադրության աջակցելու, և այդպիսով  
յուր երդման դրժելով՝ քակել էր Արասի հետ  
ունեցած բարեկամության կապը, պարզ է որ  
վերջինս, թագավոր պսակվելուց ետ, վրեժիսն-  
դիր պիտի լիներ, մանավանդ որ նա այդ մասին  
սպառնացել էր իրան: Հետեապես ոստիկանն էլ  
յուր կողմից էր պատրաստվում:

Ամենից առաջ նա միացավ Աշոտ բոնավորի  
հետ և խոստումն առավ նրանից օղնել իրան

յուր զորքերով՝ Եթէ Աբասը Հարձակվելու լինի  
յուր դեմ։ Ապա զորքեր խնդրեց ամիրապետից՝  
առարկելով, թէ Հայաստանի արարական կալ-  
վածքները վտանգի մեջ են, հետևապես անհրա-  
ժեշտ է այդ վտանգի դեմ զինվելու։ Բայց ամի-  
րապետն զբաղված լինելով յուր երկրի ուրիշ  
կողմերում ծագած խոռվություններով՝ անու-  
շադիր թողեց Նըսրի խնդիրը։ Այն ժամանակ  
վերջինս միացավ Միջազետքի և Կորդվա կռող-  
մերում ինքնազլուխ իշխող ամիրաների հետ և  
օղնական զորք առնելով նրանցից, սկսավ Դվինն  
ու նրա շրջականերն ամրացնել։

Ամենից առաջ նա ընտիր պահակախմբերով և  
առատ պաշարով ապահովեց Դվինի և Արտաշ-  
տի բերդերը (որոնք միմյանց մոտ լինելով՝ ու-  
նեին միմյանց հետ և գաղտնի հաղորդակցու-  
թյան ճանապարհներ), որպեսզի վտանգի դեպ-  
քում ինքն ապաստանէ դրանցից մեկին։ Ապա  
յուր զորքերը բաժանելով մի քանի ստվար մա-  
սերի, նրանցից մինին հանձնեց քաղաքի ներքին  
պարիսպների և աշտարակների պահպանությու-  
նը, երկրորդին՝ արտաքին մարտկոցների հսկո-  
ղությունը, երրորդին՝ քաղաքի իրամը ջրով լըս-

նելու և շարժական կամուրջները կառավարելու  
գործը, չորրորդին՝ Արտաշատի Տափերական  
կոչված նշանավոր և մեծատարած կամրջի  
պաշտպանությունը, որի վրայով թշնամին պի-  
տի առաջանար դեպի Դվին։ Բացի այդ նա յուր  
ունեցած հեծելաղորը չորս առաջապահ զնդերի  
բաժանելով՝ ուղարկեց նրանց Դվինի նշանավոր  
ճանապարհները բոնելու։ Դրանցից մինը Խլաթա  
ուղին էր, որ սկսվում էր քաղաքի արևմտյան  
հարավ-Արևելքից, երրորդը՝ Բերդկանց ճանա-  
պարհը արևելյան կողմից. չորրորդը՝ Կողբա-  
վորի ուղին, որ ձգվում էր Հյուսիսից։ Ինչ վե-  
րաբերում է Կարնո ճանապարհին, որ քաղաքի  
արևմտյան կողմն էր ընկնում, այդտեղ ոստի-  
կանը ոլահաղաններ չկարդեց, որովհետեւ այդ-  
տեղից նա սպասում էր յուր դաշնակից Աշոտի  
զորքերին, մինչդեռ մյուս կողմերից, նրա կար-  
ծիքով, պիտի առաջանար թշնամին. այսինքն՝  
Խլաթա կամ Նախիջևանի ճանապարհով Արասը,  
Բերդկանց ճանապարհով՝ սյունեցիք, իսկ կող-  
բավորի կողմից՝ Վահրամ սեպուհը, որ տակա-  
վին գտնվում էր Գուգարքում։

Զնայելով այս պատրաստությանց, ոստիկանը, սակայն, հույս ուներ դեռ ազատ մնալ հայոց վրեժինդրությունից, որովհետև ծանոթ էր նրանց խաղաղասեր բնության և հավատում էր, թե կարող է նորեն գրավել թագավորի սիրտը և նորոգել նրա հետ յուր բարեկամությունը:

Այս պատճառով նա ընծաներով մարդիկ ուղարկեց Վասպուրական՝ Արաս արքայի դահակալությունն ու թագավորությունը չնորհավորելու և նրա հետ հաշտության նոր դաշնկուելու:

— Ասացեք ամիրային, թե հայոց թագավորը Դվինի մեջ կընդունե նրա չնորհավորությունները... պատվիրեց Արասը արարացի դեսպաններին և ետ դաշտը նրանց իրանց ընծաներով:

Այսքանն արդեն բավական էր, որ ոստիկանը հասկանար, թե թագավորն այլու չի կամենում խարվել և յուր ուխտադրուժ վարմունքը ներել: Այս պատճառով երբ դեսպանները հասան Դվին և թագավորի պատվերը հայտնեցին, Նըսրը հրամայեց զորքերին կովի պատրաստվել:

Բայց Արաս թագավորի բանակը, որ կազմված էր միայն Արարատյան գնդերից և Արծ-

բունյաց զորքերից, ծանրությամբ էր առաջա-  
նում: Որովհետև, համաձայն կանխավ արած  
որոշման, Մոկաց տերն ու Աղձնյաց նահասետն  
իրանց զորքերով պիտի միանային արքայի հետ  
Շարուրի դաշտում: Սյունյաց իշխանները պիտի  
մտնեին Մազաղ և Գառնո ու Գեղա զորքերի  
հետ միասին իջնեին Ռւրծաճոր: Իսկ Վահրամ  
ուեպուհը, որ ապահովված էր արդեն ավխազնե-  
րի կողմից (որովհետև ամբողջ Գուգարքը զինել  
էր արդեն նրանց դեմ), յուր զորքերն առնելով  
պիտի իջներ Շիրակ և Երազզառսի շրջանում  
եղած գնդերի հետ միանալով՝ դիմեր Դվինի  
դաշտը: Ռւրեմն, մինչև որ այդ իշխանները  
կհասնեին որոշյալ տեղերը, թաղավորի զորքը  
չպիտի շտապեր, որովհետև դաշնակից իշխան-  
ները նպատակ ունեին միահամուռ կերպով պա-  
շարել Դվինը և եթե կարելի էր, դրավել նրան  
հարձակումով:

Բայց այստեղ արդեն արաբացիք տենդադին  
պատրաստությանց մեջ էին. քաղաքի պարիսալ-  
ների մոտ ժողովում էին ուաղմական մթերքներ.  
գարանները լցնում էին դյուրավառ նյութերով.  
իրամատների համար պատրաստում էին խցան-

ներ. մարտկոցները գինում էին երկաթյա կաբօթերով ու ջախջախով դործիքներով. բուրգերի մեջ հավաքում էին որձաքարի բեկորներ, որով պետք է փիլիկվաններն ու սանդուխքները ջարդեին. միով բանիվ առավոտվանից մինչ երեկո մարդիկ զբաղված էին մահառիթ աշխատությամբ և հույս ունեին, որ զբանով մեծ կոտորած պիտի անեն պաշարողների մեջ:

Ներքին պատրաստություններն ավարտելուց ետ՝ ոստիկանը հրամայեց խրամը ջրով լցնել: Եվ ահա արարացի զինվորները հարյուրավոր բահերով դիմեցին դեպի Արտաշատի ջրանցքը, որպեսզի նրա թումբերը բանալով՝ ջուրը դարձնեն դեպի Դվին:

Այդ ջրանցքը շինվել էր Քրիստոսից մոտ 200 տարի առաջ Արտաշեաս կուսակալի օրով և կարթաղենացոց հռչակավոր զորավար Աննիբալի ծրագրով: Երբ վերջինս հայրենիքից տարագիր՝ դեգերում էր Հայաստանի մեջ, Արտաշեան առպնջականեց նրան սիրով և օդուտ քաղելով բազմափորձ զորավարի ներկայությունից, նրա խորհրդադրով հիմնեց Արտաշատ քաղաքն ու բերդը Երասխ գետի վրա: Եվ որովհետեւ տեղը, ուր

Հիմնված էր քաղաքը, և ի կողմէց պատաժ էր  
Երասխ ու Մեծավոր գետերով, ուստի չորրորդ  
կողմը ջրափակ անելու համար փորեցին այդ  
ջրանցքը, որով քաղաքը դառնում էր թշնամուն  
անմատչելի:

Բայց որովհետեւ հոչակավոր Արտաշատը վա-  
ղուց արդեն դադարել էր շահաստան լինելուց, և  
նրա վառած ու ճոխության ժառանգորդ այժմ  
Դվինն էր հանդիսանում, ուստի նրա հինավուրց  
ջրանցքն էլ Դվինի խրամը պիտի ողողեր: Արտա-  
շատի անշքանալուց ետ՝ հայոց թագավորները՝  
սկսած Խոսրով բ.-ից, որ Դվինը շինեց և յուր  
աթոռն այդտեղ փոխադրեց, մինչև Բագրատուն-  
յաց պայազատները, իրանց հոգն ու խնամքը  
Դվինին նվիրեցին նվիրեցին և ոազմական ամ-  
րություններով հարստացրին նրան: Ուստի այդ  
ժամանակից հիշյալ ջրանցքն էլ ծառայում էր  
Դվինին:

Բայց օրերն անցնում էին և Արաս արքայի  
դորքերը դեռ չէին երևում: Մինչև անդամ Նա-  
խիջևանի հանապարհը պահող հեծելազորը շա-  
րունակ լուրեր էր դրկում Դվին, թե Արասը  
դեռ բանակած է Շարուրում: Այս պատճառով

տրաբացիք սկսան մի առժամանակ անհոգության տալ իրանց և կեր ու խումով զվարճանալ։ Մինչև անդամ ջրանցքի վըա աշխատողները ծանրությամբ էին շարժվում և մի քանի օրվա մեջ հազիվ էին փլել թումբերի մի մասը։

Սակայն Արաս թաղավորի զորքը, որին միացել էին արդեն աղձնեցիք և մոկացիք, վաղուց հեռացել էր Շարուրից և այն՝ գիշերանց։

Նրա բանակատեղում մնում էին միայն դատարկ վրաններ՝ մի քանի վաշտ պահապաններով, որոնք պաշտոն ունեին՝ խարել Նախինանի ճանապարհը պահող արաբացիներին, ցույց տալով նրանց, թե հայոց զորքը դեռ բանակած է այստեղ։ — Այդ զորքը սակայն, դանաղան մասերի բաժանված, անծանոթ ճանապարհներով դիմում էր Դվին։

Արդեն ամեն կողմից նոտենում էին դաշնակիցները միմյանց, երբ լուր հասավ Մարզպետունուն, թե արաբացիք սկսել են ջրանցքի թումբերը փլել՝ Դվինի խրամը լցնելու համար։ Սպարապետ իշխանը, որ միտք ուներ դեռևս հանդիսատ տալ զորքին Ուրծաձորում, սաստիկ այլարվեցավ, որովհետեւ խրամի լցվելով ահագին

դժվարություններ սլիտի առաջանացին իրանց համար, նախ՝ զորքն անկարող սլիտի լիներ մոտենալ քաղաքի ջրապատ պարսպին կամ դռներին, հետևասլես մտադրված հարձակումը չպիտի հաջողեր. երկրորդ՝ մեծ աշխատություն և երկար ժամանակ սլիտի դործ դնեին ջրանցքի բերանը փակելու և ջրալից խրամը, գոնես մի քանի տեղ, խիճով լցնելու, որպեսզի այդ տեղերով զորքը կարողանար մոտենալ պարսպին, երրորդ՝ այդ դործերը կատարելու համար աշխատող հայերից շատերը նետահար սլիտի լինեին թշնամուց, որովհետեւ պարսպի վրա եղողները թույլ չեն տալ ոչ ոքին՝ պարսպի տակ դործելու:

Այս ամենն աչքի առաջ ունենալով՝ սպառապետը հայտնեց թագավորին, թե անհրաժեշտ է մի քանի դնդերով դիմել անմիջապես Արտաշատի կողմը և ջրանցքի բացումն արգելել: Մարզպետունու առաջարկությունը բանավոր դատան նաև դաշնակից իշխանները:

Ուստի թագավորի ընտրությամբ այդ դործի համար նշանակվեցան վանանդացոց ու սյունյաց դնդերը, որոնց պիտի առաջնորդեր Բաբեկն իշ-

խանը, իբրև քոջածանոթ Արտաշատի շրջակա-  
ներին:

Երեկո էր, երբ Բաբկեն իշխանը յուր դոր-  
քերով մտավ Ազատ գետի հովիտը և սկսավ ա-  
ռաջանալ դեպի Դվին: Որովհետեւ ճանապարհը,  
որով առաջանում էին նրանք, անցնում էր Խոս-  
րովակերտ անտառի միջով, որ Ազատի հովտից  
սկսած տարածվում էր մինչև Գեղա ստորոտը,  
այդ սլատճառով զորքերի ընթացքը աննկատելի  
մնաց արաբացի պահանորդներին, որոնք խմբե-  
րով թափառում էին Դվինի դաշտում:

Մութը կոխելու վրա հայերը Մեծամորն  
անցան և նրա ուղղությամբ սկսան առաջանալ  
դեպի Արտաշատ: Զնայելով որ զորքերը հոգնած  
էին, այսուամենայնիվ իշխանը չէր կամենում  
հանդիսատ տալ նրանց, որովհետեւ ամեն մի կողց-  
րած ժամը կարող էր մի վտանգ առաջ բերել  
իրանց համար: Բայց Արտաշատից մի քանի  
փարստիս հեռու նա ստիպված էր կանգ տոնել՝  
մինչև որ ջրանցքը դիտելու համար դրկված  
յուր լրտեսները կվերադառնային: Նա կամեցել  
էր նախ տեղեկանալ, թե ինչ դրության մեջ է  
դտնվում զործը, և ապա զորքերն առաջ վարել:

Հստ որում, եթե ջրանցքը բացված լիներ և խը-  
րամը ջրով լցված, էլ իրանց Արտաշատ դնալը  
միտք չէր ունենալ: Այդ քայլը, ընդհակառակը,  
կարող էր մնաս բերել, նախ յուր փոքրաթիվ  
զնդերը վտանգելով և երկրորդ՝ թշնամուն թա-  
վավորի գալը հայտնելով:

Բայց լրտեսները վերադարձան և հայտնե-  
ցին, թե մնացել է միայն մի քանի քայլ տարա-  
ծություն, որպեսզի ջրանցքի արդելքը բացվի,  
և թե այդ էլ արաբացիք չուտով կակազեն, որով-  
հետեւ գործի վրա աշխատում էն հարյուրավոր  
ձեռքեր:

— Օ՞ն ուրեմն, հառաջ, էլ սովասելու ժա-  
մանակ չէ, զոչեց Բարգեն իշխանը (և) առաջ ան-  
ցավ: Զորքը սրբնթաց հետեւեց նրան:

Եվ արդարեւ, ջրանցքի առաջը բանալու հա-  
մար մնացել էր միայն մի քանի քայլ: Գործա-  
վոր զորքի գլխին կանդնած էր Բեշիր զորապետը  
և շտալեցնում էր նրանց, որպեսզի հենց նույն  
դիշերը ջուրը դարձնե դեպի խրամը: Զնայելով  
որ մութը կոխել էր, այսուամենայնիվ, զորա-  
պետը չէր հեռանում այդտեղից: Արաբական  
նժույղի վրա նստած՝ նա դիմում էր մերթ այս

և մերթ այն կողմը՝ զործավորներին չտապեց-  
նելու համար։ Ըստ երեսութին նա չէր կամե-  
նում հեռանալ այդտեղից, մինչեւ որ յուր աչքով  
չտեսնե ջրանցքի բացումը։

Եվ ահա՛ Հանկարծ Արտաշատի կողմից  
որոտընդուստ աղաղակներով արարացոց վրա  
թափվեցան Հայոց զորքերը և սրերով ու նիզակ-  
ներով սկսան անխնա և աջ ու ձախ հարվածել։  
Հարճակումն ա՛յնքան անակընկալ և թափին այն-  
քան զորավոր էր, որ արարացիներից ոչ ոք  
չհամարճակվեց գիտադրել։ Նրանք շփոթված ու  
սարսափահար ձգեցին բահերն ու զործիքները և  
սկսան փախուստ տալ դեպի Դվինի և Արտաշա-  
տի կողմերը։ Զնայելով որ Բեշիրը սուրբ Հանեց  
և գոռալով խրախույս կարդաց զորականին,  
բայց նրան լոռղ չեղավ։ Մի քանի տասնյակ հո-  
գի, որոնք բահերով ու վաղակավորներով խի-  
զախեցին Հայերի դեմ, տեղն ու տեղը ջարդվե-  
ցան։ Այս տեսնելով Բեշիրը, ինքն էլ ձգեց հո-  
կատը և ձին մտրակերով փախավ դեպի Դվին։  
Հայերն Աղաղակելով ընկան փախչողների եսե-  
մից և հալածեցին նրանց մինչև քաղաքի սահմա-

նը, և ապա դառնալով՝ դրավեցին ջրանցքը և  
կանգ առան այլտեղ:

Բայց Բեշիրը խույս էր ավել ոչ թե փախչե-  
լու, այլ Դվինից նոր զորք բերելու մտքով։ Սա-  
կայն ոստիկանը, որ ավելի շրջահայաց ու հե-  
ռատես էր, թույլ չտվավ նրան զորք հանել քա-  
ղաքից։

— Քանի որ չդիտենք, թե ի՞նչ ուժով են  
հայերը հասել այստեղ, կամ թե ի՞նչ կետերում  
են համախմբված նրանք և մութն արգելում է  
մեղ ճիշտ տեղեկություններ առնել այդ ժամին,  
ավելի լավ է ուրեմն զորքը վտանգի չենթարկել.  
առավոտը մենք ամեն ինչ կտեսնենք աստուծո-  
լուսով և ըստ այնմ հարկ եղածը կփութանք  
տնօրինել, ասաց Նալրը Բեշիրին և վերջինս բա-  
նավոր գտավ այդ խորհուրդը։

Եվ որքա՞ն մեծ եղավ արաբացոց զարմանքը,  
երբ առավոտը վեր կենալով տեսան, թե Արտա-  
շատի ջրանցքը գրավող զորքը կազմված է ըն-  
դամենը մի քանի վաշտերից։ Ամոթի հետ միա-  
սին մի կատաղի զայրույթ եկավ Բեշիրի վրա,  
երբ նա համողվեց, թե ինքը արաբական քաջե-

ըի առաջնորդ լինելով հանդերձ, իմայնել է մի  
քանի վաշտերի առաջից :

— Հենց այս վայրկյանին կջարդեմ բոլորին,  
թո՛ղ ոչ մի զորական չազատվի իմ սրից, գոռաց  
զորապետը և արաբական կատաղիներից մի քանի  
գունդ առնելով՝ պատրաստվում էր դուրս գալ  
Դվինի պարիսպներից :

Աստիկանը, որ այդ ժամանակ կանդնած էր  
յուր ապարանքի մինարեթի վրա և դիտում էր  
Դվինի ջրջապատը, տեսնելու համար թե էլ ու-  
րիշ ո՞րտեղ կան հայ զորախմբեր, նկատեց որ  
քաղաքի արևմտյան կողմից, այն է՝ կարնո ճա-  
նապարհով, ուր ինքը պահակախումբ չէր կար-  
դել, առաջանում է ստվար հեծելախումբ :

— Ահա դալիս են և մեր դաշնակից Աշոտի  
զորքերը, ճայնեց նա դեպի Բեշիրը, որ դեռ  
կանդնած էր ապարանքի առաջ և հրահանդներ  
էր տալիս զորքին :

— Առանց նրանց էլ մենք գործը կավար-  
տենք, հոխորտաց զորապետը և յուր հրոսա-  
խումբը կարդավորելով, դուրս եկավ Դվինի  
պարիսպներից :

Բարդեն իշխանի դրությունը խիստ ծանր

էր։ Նա յուր հետ ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ զորք։ Եվ թեպետ դրանք հայոց ամենաընտիր քաջերիցն էին, այսուամենայնիվ չեն կարող երկար դիմադրել, եթե նրանց շը ջապատեր ավելի մեծ բազմություն։ Բացի այդ, նրանք գտնվում էին Արտաշատի և Դվինի մեջտեղը, բաց դաշտի վրա և չունեին ոչ պատրապարվելու տեղ, ոչ էլ ժամանակ՝ պատճել շինելու։ Արաբացիք կարող էին շրջապատել նրանց և տեղն ու տեղը կոտորել։ Միակ փրկությունը ձգել հեռանալն էր։ Բայց այդ էլ չեն կամենում անել, որովհետեւ այն ժամանակ ջրանցքը կմնար արաբացոց ձեռքը, և նրանք մի կես ժամում թումբի մնացորդը փլելով՝ ջուրը կդարձնեին դեպի խրամը, որով և՛ կոչնչանային թե՛տարած հաղթությունը և՛ թե՛ ապագա հաջողության հույսերը։

Արաս թագավորը դրկելով՝ իշխանին այտեղ, ապահովեցրել էր նրան՝ թե ինքը հետեւյալ առավոտ, յուր բոլոր զորքերով, կդտնվի Դվինի առջև։ Բայց արեն ահա ծագում էր և, սակայն, արքայական բանակը չէր երեգում ոչ մի տեղ, նույնիսկ հառաջապահ գնդերը

չին նշմարվում... Բարդեն իշխանի հետամուտաները, որոնք Արտաշատի բլուրներից դիտել էին ամեն կողմ, եկան և պատմեցին, թե միայն Կարնո ճանապարհի վրա տեսան մի հեծելալումը, որ շտավով հառաջանում էր դեպի Դվին, իսկ մեացյալ տեղերում արաբացի պահակներից զատ ոչինչ չնշմարեցին:

— Կարնո ճանապարհով կարող է միայն դավաճանի զորքը դալ, ասաց Բարդենը. Ֆեր փրկությունը պետք է սպասել Դվինի դաշտից:

— Մեկ էլ երկնքից, նկատեց համհարզներից մինը:

— Եթե աստված հաճի... հարեց իշխանը և լոեց:

Բայց հենց այդ ժամանակ բացվեցին Դվինի հարավային դռները և արաբացոց զորքը դալարափողերը հնչեցնելով, սկսավ դուրս խուժել և դիմել դեպի Արտաշատի ջրանցքը:

Բարդեն իշխանն արդեն կարգավորել էր յուր փոքրաթիվ զորքը, կանգնեցնելով նրանց եռանկյունաձև և հրաման տալով, որ հարձակման դեպքում աշխատեն միջամուխ լինել հարձակվողների մեջ և երկու մասի բաժանելով

նրանց՝ այնպես սկսեն իրենց բաղկառւմը։ Այդ  
եղանակն այն առավելությունն ուներ, որ կը-  
թուլացներ հարձակման թափը և հրոսակմբի  
ստվարությունն արգելք չէր լինիլ աղատ զինա-  
շարժության։

Իշխանը հենց որ լսեց փողի ձայնը, աշտա-  
նակեց իսկույն յուր նժույգը և սուրը մերկաց-  
նելով՝ ձայն տվալ դեպի դորքերը՝

— Միրելի քաջե՛ր, մենք սակավաթիվ ենք  
և թշնամին զորավոր։ Բայց մեր դատն արդար  
է, իսկ նրանցն անիրավ։ Աստված օդնում է  
արդարին և յուր բազուկը հզորագույն է ամե-  
նից։ Դիմավորեցեք թշնամուն աներկյուղ և ա-  
ռանց դիմադարձության, աստված պիտի օդնե-  
ճեղ երկրորդ անդամ նրան խորտակելու, իսկ  
ում որ մեղանից մահ կվիճակվի, նա թող  
մխիթարվի, որ մեռնում է հայրենիքի և այն  
խաչի համար, որ ահա՛ Դվինի բարձունքից  
նայում է մեղ վրա։

Այս ասելով իշխանը սաղավարտը հանեց և  
դեմքը դեպի Ս. Գրիգորի գմբեթը դարձնե-  
լով՝ «Դու մեղ օդնիր, ո՛վ սուրբ կաթուղիկե-  
մեր կոխին ու մահը քո և քո որդիոց ազատու-

թյան համար է . թող թշնամին չպարծենա թե  
կիսալուսինը հաղթեց սուրբ Խաչին . . . » :

Այս տսելով նա սուրբ շողացրեց և «օ՞ն  
հառաջ . . . » գոռալով դիմեց դեպի թշնամին :

Սյունյաց և Վանանդացոց քաջերը որոտըն-  
դոստ աղաղակով հետեւեցին նրան :

Նույնական ողևորությամբ և գոռյուն-դո-  
չյունով դիմում էին հայերի դեմ արաբացինե-  
րը :

Վերջապես նրանք հասան և քաջերը գոռա-  
լով ընկան միմյանց վրա : Սրերն սկսան շողալ,  
նիզակները ճոճել և աջ ու ձախ կատաղի հար-  
վածներ տեղալ : Հարձակումն այնպես սաստիկ  
և բաղխումը զորավոր էր, որ երկու կողմից  
էլ կարգերն իսկույն խանդարվեցան : Վանանդա-  
ցիք բաժանվեցան սյունեցիներից, իսկ այս վեր-  
ջիններն իրարից . նույպես էլ արաբացիք չկա-  
րողացան իրանց միությունը պահպանել :  
Հայերի մի մասը ետ մղեց նրանց աջ թեր,  
իսկ որանք դրա վոխարեն ճնշեցին նրանց ձա-  
խը : Այդպիսով խմբերը ճաղաղելով՝ կոխվը  
բորբոքեցին մի քանի կետերի վրա : Այս հան-  
դամանքը ճեռնտու էր հայերին . որովհետեւ

չարժվելու ազատություն ունենալով՝ ավելի  
հաջողությամբ կկռվեին։ Բայց ոստիկանը, որ  
յուր մինարեթից դիտում էր կռվի ընթացքը,  
տեսնելով հայերի զորեղ ընդդիմությունը, նոր  
դորքեր դրկեց յուրայինների օդնության։ Այդ  
պատճառով հայերը նոր հարձակման հանդի-  
պելով, հետղհետե տկարացան։ Նրանց յուրա-  
քանչյուր խմբակին շրջապատել էր մի ահավոր  
գունդ։ Վայրկանը հուսահատական էր։ Բար-  
գեն իշխանը, որ կռվում էր կատաղաբար, նոր  
հարձակման առաջ ետ կասեց մի վայրկյան։  
ապա հայացքը Դվինի կաթուղիկեին ուղղելով՝  
որտառուչ ձայնով բացականչեց.

— «Մի՞թե դու, ո՞վ լուսավորչի խաչ,  
ալիտի հանդուրժես մեր կոտորածին և հաղթու-  
թյուն տաս դաբչ հաղարացուն, որ ծաղրում է  
քո սրբությունը... Ցույց տուր ով քառաթև,  
որ իզուր չենք մենք ապավինել քեզ, և որ  
հզորագույն է այն բաղուկը, որ թևին դամ-  
վեցավ...»։

Այս ասելով նա սուսերամերկ խոյացավ դե-  
պի հարձակվող զորքերը և անման հերոսությամբ  
սկսավ պաշտպանել յուր մարտիկների տկարա-

ցող կողմը։ Բայց ոչ իշխանի և ոչ նրա զորքի  
հերոսական ջանքերը չկարողացան հաղթել ա-  
րաբացոց դնդերին, որոնք հետզհետեւ ստվարա-  
նում էին։ Ընդհակառակը, մի քանի կետերի  
վրա հայերն սկսան վերջնականապես ընկճվել-  
նքանք, հոժարությամբ փախուստ կտային, թե  
չվախենային խապառ ջնջվելուց։ այս պատճա-  
ռով կովում էին հուսահատ կատաղությամբ։  
Փոքր մի ևս և արաբացիք հաղթության փողը  
պետք է հնչեին... Բայց ահա՝ հենց այդ վայր-  
կենին լսվեցավ հանկարծ հայախումբ զորքերի  
որոտագին աղաղակը և Վահրամ սեպուհը, ինչ-  
պես շանթառաք մի հարված՝ ահավոր սուրը  
ձեռին ընկավ արաբացոց վրա։ Նրան հետեւում  
էին գուղարացիք, բասենցիք և Շիրակավանի  
քաջերը։ Ինչպես հանկարծահաս մի փոթորիկ  
կամ դարնանաղայր մի հեղեղ թափվեցան նը-  
րանք արաբացիների վրա և սկսան անխնա կո-  
տորել, ջարդել, ջախջախել՝ ոմանց սրախողիսող  
անելով, ոմանց նիզակահար սատակելով և շա-  
տերին նժույգների ոտքի տակ տալով։

Բարգեն իշխանը զարմացավ։ Ո՞րտեղից  
բուսատի արդյոք սեպուհը։ Ո՞րտեղ էին թագնր-

ված նրա զորքերը, չէր կարողանում գուշակել:  
Բայց Դվինի արևմտյան ճանապարհով եկող  
հեծելազորը, որ խրախուսել էր ոստիկանին  
և, ընդհակառակը, երկյուղ ազգել Բաբենին,  
հենց Վահրամ սեպուհի զորախումբն էր եղած:  
Վերջինս արքայի հրամանով շտապել էր իշխա-  
նին օգնության, ըստ որում բուն բանակը փո-  
քը ինչ պիտի ուշանար: Սեպուհը հաղարացոց  
պահակներից խույս տալու և Արտաշատի ջր-  
րանցքին անարդել հասնելու համար՝ շրջան էր  
արել Դվինի դաշտի բարձրից և Խոսրովու ան-  
տառը անցնելով՝ մտել Կարնո կոչված ճանա-  
պարհը:

Սեպուհի և նրա գնդերի հարձակումը փո-  
խեց խկույն կռվի կերպարանքը: Հաղարացիք  
հանկարծակի եկան, իսկ ոյունեցիք ու վանան-  
դացիք նոր ողի առնելով՝ սկսան ավելի կատա-  
ղաբար հարձակվել հակառակորդների վրա:  
Նորեն կռիվը բորբոքվեց. նորեն խմբերն ընդ-  
հարվեցան: Հաղարավոր սրեր շողում էին ու  
հարվածում, նիղակները՝ ճոճում ու շամփ-  
րում, սաղավարթներ ճեղքում, դրահներ պատա-  
ռում, վահաններ ջախջախում... Հաղթողների

տղակակը, ընկնողների վայունը, դենքերի չա-  
չյունը թնդացնում էր օդն ու դաշտը . . . :

Սակայն հաղթության աստղը թեքվում էր  
հայոց կողմը, արաբացիք նորեկների հարձա-  
կումից շվարելով և մանավանդ թե սաստիկ  
հարված առնելով՝ մի քանի կետերում սկսան  
նահանջել; Բեշիրն այդ տեսնելով հրամայեց  
խկույն նահանջի փող հնչեցնել, որպեսզի մնա-  
ցորդ զորքն աղատե կոտորածից: Բայց արա-  
բացիք փողի ձայնն առնելուն պես՝ փոխանակ  
քայլ առ քայլ ետ նահանջելու, սկսան միահա-  
մուռ փախուստ տալ դեպի Դմբ:

Հայերն ընկան փախչողների ետևից և  
սկսան չարաչար կոտորել նրանց: Շուտով Դմբ-  
նի դռները բացվեցան և ներս առան փախչող  
դորականը:

Մեպուհն այդ տեսնելով՝ հանդուզն միտք  
հղացավ. այն է՝ հրամայել յուր զորքերին՝  
ներս խուժել քաղաքը փախչողների ետևից:

Բայց Բաբդեն իշխանը, որ ավելի հեռատես  
էր, արդելեց նրան այդ քայլն անել, առարկե-  
լով, թե քաղաքում կարող է վտանգ հասնել  
դորքին:

Երանք բավականացան տարած հաղթությամբ և զորքը ժողովելով վերադարձան դեպի ջրանցքի հովիտը :

Երեկոյան դեմ՝ երբ կոխին արդեն ավարտած, հաղթությունը տարած, իսկ հաղարացիք Դվինի մեջ փակված էին, հասալ թաղավորը՝ Գևորգ սպարապետի, դաշնակից իշխանների և արքայական համախումբ բանակի հետ :

Վերջինս, սպարապետի կարգադրությամբ, չըջապատեց քաղաքը, բոլոր մատչելի կողմերից :

Տեսնելով Դվինի խրամը տակավին չոր և լսելով տեղի ունեցած կոմի և տարած հաղթության համար՝ թաղավորն ուրախացավ և ինչան յուր դոհության՝ գրկեց ու համբուրեց Բարդեն իշխանին և Վահրամ՝ սեպուհին։ Ապա հրամայեց փառավոր հրավառությամբ ամրող բանակը լուսավորել այդ դիշեր :

Կարճ ժամանակվա ընթացքում, Դվինի հինավուրց անտառից դուրս հանվեցան հարյուրավոր մայրեր ու կաղամախներ և տասկարներով ջախջախվելով՝ դերբուկաձև դիզվեցան թե՛

բանակի մեջ և թե՛ քաղաքի շուրջը, պարիստ-  
ների և աշտարակների հանդեպ:

Երբ մութը կոխեց և ահաղին խարույկները  
վառվեցան, Դվինը, կարծես, դյութական կեր-  
պարանք առավ: Հարյուրավոր կրակների բոցը  
բարձրանում, ծառանում էր դեպի երկինք և  
շրջապատն ամբողջապես բռնոր դունով լուսա-  
վորում: Մայրաքաղաքի պարիսպներն ու մարտ-  
կոցները պատաժ էին կրակով և հեռվից նայողը  
կարծում էր, թե քաղաքն ամբողջապես գտնը-  
վում է հրդեհի մեջ: Նրա բարձրադեր ապա-  
րանքները՝ իրենց սյունազարդ սարավույթնե-  
րով, դմբեթապարդ եկեղեցիները՝ փայլուն  
խաչերով և արարական մղկիթի ու ստիկանա-  
կան տան ուղաձիղ մինարեթները՝ ոսկյա կի-  
սալուսիններով՝ փայլում էին գիշերային խավա-  
րի մեջ մերթ պայծառ լուսով և մերթ քրքմա-  
դույն և տալիս քաղաքին մի տեսակ տիսուր և  
խորհրդավոր կերպարանք:

Իսկ Դվինի բարձունքներից նայողի առաջ  
ուրիշ պատկեր էր բացվում: Արքայական բա-  
նակը, ոյ պատաժ էր քաղաքը ամեն կողմից և  
որ ցերեկված լուսով իսկ ահավոր էր երեսում,

դէշերվա մութին այլելի երկյուղ և սարսափ էր  
ազդում : Խարույկների բոցածավալ լույսը կար-  
ծեա թե կը կնապատկում, եռապատկում էր  
զորախմբերի թիվը, բազմաթիվ կրակների  
շուրջը գայթող և հաղթական երդերով օղը  
թնդացնող զորականի աղմուկը խռովում, ան-  
հանդստացնում էր պաշարյալ մահմեղականնե-  
րի սիրտը :

Դվինի հայերը, ընդհակառակը, պաղտնի  
հըմվանքի մեջ էին, թեպետ և չէին համար-  
ձակվում երեան հանել իրանց ուրախությունը :  
Այն միտքը, թե շուտով մահմեղականի բռնա-  
պետությունը պիտի վերջանա, թե զոռող հա-  
դարացին սիտի խռնարհի վերջապես արքայի  
հաղթական դրոշակի առաջ, նրանց սիրտը լրց-  
նում էր անսահման բերկությամբ : Եվ ամենքի  
շրթունքները մրմնջում էին աղոթքներ, մանուկ  
և ծեր, կին թե՛ տղամարդ աղաջում էին աստ-  
ծուն, որ այս վերջին անդամ էլ փառավորե  
յուր անունը՝ հաղթություն տալով հայոց Խա-  
չին և Լուսավորչա հավատին . . . :

Բայց ոստիկանը, որ յուր ապարանքի մի-  
նարեթից դիտում էր այդ մեծատարած խա-

բույկնեցը և տեսնում հայ զորքերի խաղերն ու  
պարը և լոռում նրանց որոտաձայն երգեցը, ո-  
րոնք շարունակվում էին մինչև ուշ դիշեր, կա-  
տաղությունից, կարծես, ուղում՝ էր խելադար-  
վել: Նա մտաբերում էր միմյանց ետևից իրան  
հասած անհաջողությունները, և այդ բոլորը  
վերագրում յուր զորավետի ու պաշտոնյաների  
անհոգության և անմտության, ուստի և հայ-  
հոյում ու անիծում նրանց:

«Զէ՞, որ կարող էին դեթ մի օր առաջ  
ջրանցքը բանալ և քաղաքի խրամը ուղաղել...  
խոսում էր ինքն իրան ոստիկանը. բայց հարին,  
անհոգության տվյան իրանց և պատճառ դար-  
ձան թե՛ք քաղաքի դիմավոր պաշտպանությունը  
ոչնչացնելուն և թե՛ զորքերի կոտորածին...  
իսկ իմ պահանջեմ հեծելախմբե՞րը. ո՞ւր մնացին  
նրանք, ինչո՞ւ մինչև այժմ պահպանության  
չորս կետերից դեթ մի դինվոր չհասավ, որ  
թշնամու գալուստն ինձ հայտնե»...

Բայց ոստիկանն ի զուր էր տրտնջում վեր-  
ջին կետի: Նկատմամբ: Որովհետեւ ոչ թե յուր  
պահանջեմ հեծյալների անուշաւըրությունն էր  
պատճառը՝ որ ինքը ժամանակին չէր լուսացել

յուր հակառակորդի մոտենալը, այլ հայոց  
սպարապետի բազմափորձ զգուշությունը. որով-  
հետեւ նա զորքերն առաջ էր վարել այնպիսի  
ճանապահներով և ա՛յնքան միմյանցից անջատ  
խմբերով, որ հազարացի պահանորդները չէին  
կարող նրանց նշմարել: Նույնիսկ Շարուրում  
բանակած զորքի վրանները այն ժամանակ  
միայն սկսեցին քակել հայ պահակները, երբ  
բուն բանակն իջնում էր արդեն Դվինի դաշտը:

Վերջապես ոստիկանը կանչեց յուր մոտ  
Բեշիրին և սկսավ խորհուրդ անել նրա հետ:

— Այս հայերը, ըստ Երեսութին, պաշարել  
են մեղ այնպիսի դորությամբ, որին դիմադրել  
չպիտի կարողանանք, եթե նրանք հաճախ հար-  
ձակվեն մեղ վրա, ասաց նա զորտպետին, ինձ  
թվում է, թե մի հնար միայն կա ընդհարումն  
արդելելու և Աբասին մեղ հետ հաշովել ստի-  
պելու:

— Ո՞րն է այդ, հարցըց Բեշիրը, որի  
դոռողությունն ընկճվել էր արդեն կրած պար-  
տության պատճառով:

— Այն, որ հայտնենք հայոց թագավորին,  
թե կկախենք աշտարակից մեղ մոտ պահանդ

եղող յուր հորաքեռ որդուն։ Սյունյաց Սահակ  
իշխանին, եթե նա մեր առաջարկած հաշտու-  
թյունը չի ընդունիլ և յուր զորքերը չի հեռաց-  
նիլ Դվինից։

— Աբասը եթե ցանկացող լիներ հաշտու-  
թյան, քո դեսպաններին ու ընծաները ետ չէր  
դարձնիլ Վասպուրականից։

— Ուրեմն

— Կմերժե քո առաջարկությունը։

— Այն ժամանակ ես Էլ կկախեմ այդ իշ-  
խանին. թող այնուհետեւ նրա Սմբատ ու Բար-  
դեն եղբայրները խիզախեն մեղ դեմ և Դվինն  
առնելուց առաջ՝ իրանց եղբոր դիակը գրկեն։

— Իսկ եթե հանկարծ Դվինն առնե՞ն։

— Թող առնեն, եթե կարող են. ճակատա-  
դրից չպիտի փախչենք, ես, դոնե, այդ սպա-  
նությամբ խստադին կիրացուեմ նրա հարազատ-  
ների սիրտը։

— Բայց, տեր իմ, այդ որոշումը կարի  
վտանգավոր է, նկատեց Բեշիրը. այս հայերը  
բնավ խստասիրտ չեն. նրանք երբ գրավում են  
մի քաղաք, մեղ նման չեն կոտորում նրա  
բնակիչներին։ Այդպես էլ, եթե Դվինը գրավեն,

վկասու չեն հասցնիլ մեր անձին կամ նույնիսկ մեր զորքերին, եթե միայն քո ցասումը դործաղբած չլինիս դու. բայց եթե Սահակ իշխանին սպանես, այն ժամանակ մենք ամենքս անխնտ կջնջվենք: Դու չես ճանաչում ոյունեցիներին. բայց ես հաճախ ընդհարվել եմ նրանց հետ և ծանոթ եմ այդ ցեղի անսանձ կատաղությանը: Նվանք չեն կարող տանել այն անարդանաց, որ դու կհասցնես նրանց իրանց իշխանին սպանելով:

Ոստիկանի վրա տպավորություն արին զորագետի խոռքերը և նա գլուխը կախելով ընկալ մտածության մեջ:

— Ի՞նչ անենք, ուրեմն, հարցրեց նա վերջապես մտախոհ աչքերը զորապետին ուղղելով և յուր նոսր, աղերեկ մորուքը հուշեկ չոյելով:

— Պիտի պաշտպանվենք, որքան կարող ենք և պաշտպանվենք մեր բոլոր զորությամբ, վճռական ձայնով պատասխանեց Բեշիրը:

Այս որոշման գալով՝ ոստիկանն ու զորադեմը բաժանվեցան իրարից:

Բայց հայոց բանակում խորհուրդ չկար

այդ գիշեր : Թագավորն ու իշխանները ապա  
հով էին, որ ամեն կողմից շղթայած են Դվի-  
նը, մնում էր սպասել առավոտյան լուսին,  
որպեսզի հարկ եղած հետազոտություններն ա-  
նելով, ըստ այսմ ոբոշեին, թե արդյոք հար-  
ձակմամբ թե պաշարումով պիտի դրավեն քա-  
ղաքը :

Բայց կես գիշերվա մեջ պահակ զինվորնե-  
րը լուր տվին սպարապետին, թե Նախիջևանի  
ճանապարհով ստվար հեծելազոր է առաջանում  
դեպի հայոց բանակը : Դրանք ոչ այլ ոք էին,  
եթե ոչ ոստիկանի կողմից Դվինի այդ սահմա-  
նում կարգված պահանորդները, որոնք վերջա-  
ղես հայոց Շարուրից հեռանալն իմանալով՝  
շտապում էին թե նրանց ճանապարհը փակելու  
(հուսալով մի որևէ տեղ հանդիպել նրա) և  
թե ոստիկանին տեղեկություն տալու :

Սպարապետն ընդունելով, թե դրանք ի-  
րանց ետևից շրջապատելու և Դվինի կողմից  
լինելիք հարձակման նպաստելու մտքով են գա-  
լիս, պատվիրեց իսկույն վահրամ սեպուհին  
դիմավորել նրանց յուր հեծելախմբով : Վերջի-  
նիս միացան նաև Մոկաց քաջերը :

Վեղիի ներքին հովիտներից մեկում սեպու-  
հը հանդիպեց արաբացի հեծյալներին և հրամա-  
յեց նրանց զինաթափ լինել:

Արաբացիք, որ մթան պատճառով հայոց  
սազմությունը չափել չկարողացան, պատա-  
խանի փոխարեն հարձակվել սկսան:

Այն ժամանակ սեպուհի հպոր ձայնը որո-  
տաց և հայոց քաջերը մեծաղղորդ աղաղակով  
ընկան թշնամու վրա:

Տեղի ունեցավ կատաղի ընդհարումն: Բայց  
նա երկար չտևեց: Արաբացիք իսկույն դպացին  
թե որքա՞ն բաղմաթիվ են իրենց դեմ ուոր  
շարժող բազուկները, ուստի մի փոքր ընդդի-  
մությունից ետք, որ, սակայն, տասնյակ դին-  
վորներ արժեց իրանց, զինաղուլ խնդրեցին:

Վահրամ սեպուհը հրամայեց կոտորածը  
դաղարեցնել և արաբացի հեծյալներին զինա-  
թափ անելով և ձիանը խլելով՝ իրանց գերի-  
վարել բանակը:

Եվ որովհետեւ հետևյալ օբը նրանք տեղե-  
կություններ տվին սպարապետին այն պահա-  
կախմբերի մասին, որոնք դտնվում էին Խլա-  
թա, Բերդկանց և Կողբափորի ճանապարհ-

ներում, ուստի Մարդակետունի իշխանը՝ հրա-  
ման առնելով արքայից, մի քանի ստվար զո-  
րախմբեր ուղարկեց այդ կողմերը արարացի  
հեծյալներին հալածելու համար, որպեսզի քա-  
ղաքի հետ ունեցած ընդհարման դեպքում նը-  
րանք ետևից հասնելով չխանդարեն իրանց: Հա-  
յոց զորախմբերը, որոնք դիմեցին հիշյալ ճա-  
նապարհները՝ Վահրամ սեպուհի, Ամբատ Եշ-  
խանի և Մոկաց տիրոջ առաջնորդությամբ,  
պատահելով հաղարացի պահակախմբերին,  
հարձակվեցան նրանց վրա և քիչ կամ շատ  
կոտորած անելուց ետ՝ նրանց մի մասը հա-  
լածեցին դեպի Ատրպատկանի կամ կորդլաց  
կողմերը և մյուսը դերելով՝ բանակը բերին:

Աշոտ-Բռնավորը, որ խոստացել էր յուր  
զորքերով օդնել ոստիկանին, լսելով Արաս թա-  
գավորի՝ յուր դաշնակիցների հետ միասին Դվին  
հասնելը, այլև նրա զորքերի տարած քանի մի  
հաղթությունները, ոչ միայն ետ կացավ Նոր-  
քին օդնելուց, այլև յուր զորքերը Բաղարան  
ժողովելով՝ ինքը ևս ամրացավ այդտեղ:

Իսկ Արաս թագավորը Դվինի հաղորդակ-  
ցություններն ամեն կողմից կտրելուց ետ՝

խորհրդի հրավիրեց յուր իշխաններին որոշելու համար, թէ ի՞նչ եղանակով սկսեն հարձակումը:

Դեռ սպարապետը, որ թանկ էր դնահատում հայ զորականի կյանքը, խորհուրդ տվավ թաղավորին՝ ամենից առաջ Նորբին առաջարկել՝ քաղաքը հանձնել իրանց առանց պատերազմի:

— Եթե նա կհռժարվի, բարի, եթե ոչ, այն ժամանակ մենք մեր հարձակումը կըսկըսենք, ասաց սպարապետը:

— Այո, եթե նա իմանա, թե ինքը զուրկ է ամ ձեռնուվությունից, դուցե չվստահանա գրգռել մեր զայրութը և այդ հանգամանքը հավասարապես շահ կընըրե թե՛ մեզ և թե՛ իրան, ավելացրեց Ամբատ իշխանը:

Արքային հաճո թվեցավ այս առաջարկությունը, և դաշնակից իշխանները ևս համակերպեցան նրա հետ:

Նույնիսկ այդ օրը Աղձնյաց նահապետը մի քանի աղատանիների ընկերակցությամբ դիմեց Դիլին՝ ոստիկանի հետ խոսելու:

Նոր ամիրան պատվով ընդունեց նրան յուր,

ապարանքի շքեղ դահլիճներից մինում և հա-  
ճություն հայտնեց լսել հայոց թագավորի  
պատգամը :

— «Աքաս արքան հրամայեց ինձ ասել Մե-  
ծափայլ Ամիրային՝ — խոսել սկսավ նահատե-  
տը, — թե Դվինը հայոց աշխարհի մայրաքաղաքն  
է, թե նրան հիմնել և տիրել են հայոց թագավոր  
ները, և թե վերջին տարիներում իսկ նա պատ-  
կանել է հայ իշխանապետության : Ամիրապետի  
ոստիկանները կարող էին նստել այդտեղ՝ իրեն  
երկրի շահաստանում և դանձել ամիրապետի  
հասույթները : Բայց նրանք իրավունք չու-  
նեին նրան դրավելու և նրա միջոցով էլ երկրի  
աղատության վրա բռնանալու . ըստ որում այդ  
երկրի կառավարը հայոց թագավորն է, իսկ  
ժողովրդի աղատության տերը՝ ինքը ժողո-  
վուրդը : Յուսուփիը և նրա նախորդները անիրավ  
հափշտակությանց հետ միասին՝ հաճախ բռնա-  
ցել են նաև Դվինի վրա :

«Բայց այդ պատահել է այն ժամանակ,  
երբ հայոց իշխանները անջատվել են լրանց  
թագավորից և կամ վատաբար դավաճանել են  
նրան : Իսկ այժմ նրովհետեւ հայ իշխանները

միացած են ինձ հետ և իմ զորքերը հավատա-  
բիմ են ինձ, ուստի ես զորավոր եմ և հենց  
այդ պատճառով էլ թույլ չեմ տալ, որ Յու-  
սուփի հաջորդը գնա նրա շավղով, կամ թե  
բռնանա իմ ժողովրդի վրա: Զհիշելով անդամ  
այն, որ Նորը ամիրան բարեկամության ուխտ  
է զրել հանդուցյալ արքայի հետ և վերջը դը-  
ժելով յուր ուխտին՝ աջակցել է հայոց դահի  
դեմ լարած դավաճանության... չհիշելով այն՝  
որ նա անիրավաբար հափշտակել է հայոց կա-  
թուղիկոսարանը և կաթուղիկոսի աթոռը տա-  
րագրել ոստանից, որի համար ես իրեն իմ ե-  
կեղեցվո պաշտամն, պարտավոր էի արժանա-  
վոր հատուցումն անել նրան, այսուամենայնիվ,  
չկամենալով արյունահեղության պատճառ-  
դառնալ, ես առաջարկում եմ ոստիկանին խա-  
ղաղությամբ հանձնել ինձ իմ քաղաքը, որից  
ետ և ես կթույլատրեմ իրան ազատ ապրել  
յուր ապարանքում: Հակառակ դեպքում, եթե  
ես Դվինը դրավեցի ուժով, այն ժամանակ  
թուղ ոստիկանը իմանա, որ առաջին օրն իսկ  
բնաջինջ կանեմ թե յուր զորախմբերը և թե

Դպինը բոլոր ամիրաներին, որոնք կալվածներ  
ունեն Ռստանում և ապարանքներ՝ Դվինի հրա-  
պարակների վրա... Բացի այս, ես չեմ խնայիլ  
նույնիսկ իրան ռստիկանին։ Եվ այս ամենն ա-  
նելով հանդերձ՝ ես թշնամացած չեմ լինիլ ա-  
միրապետին, այլ պատժած միայն նրա գործա-  
կալին, որ անխոհեմությամբ խոռվում է իմ  
երկիրը...»։

Ռստիկանը, որ սկզբում խաղաղ սրտով  
ականջում էր պատգամավոր իշխանին, վերջին  
խոսքերը լսելուն պես վեր թուավ տեղից և  
հուզված բացականչեց։

— «Քո այդ նոր թագավորն ավելի հանդուզն  
է քան յուր նախորդը... Ասա նշան, որ ես  
չեմ ընդունում հաշտության ո՛չ մի պայման և  
որ ես իրավունքով տիրում եմ այն քաղաքին,  
որ երկու հարյուր տարի սրանից առաջ գրա-  
վել է արարական սուրբ։ Թող հառաջ վարե նա  
յուր զորքերը և ուժով դրավե այս քաղաքը,  
եթե կարող է։ Բայց միևնույն ժամանակ թող  
չմոռանա, որ նա կովում է արարացոց երկնա-  
փառ ամիրապետի և ոչ թե նրա ռստիկանի  
հետ...»։

Պատգամավոր իշխանը վերադարձավ յո՞ք  
հետեւրդների հետ և հայտնեց արքային Նորի  
պատասխանը :

— Լավ ուրեմն, մենք մեր պարտքը կկա-  
տարենք և ցույց կտանք այդ հաղաքացուն, որ  
ամիրապետի անունով տրված սպառնալիքները  
չեն կարող ո՛չ մեզ վախեցնել և ո՛չ էլ մեր ի-  
րավունքները շղթայել, ասաց թաղավորը և  
ապա հրամայեց սպարապետին հարձակման  
պատրաստությունները տեսնել:

Երազդավորսից հետղհետե բերում էին  
պաշարման վերաբերյալ դործիքներ և պարս-  
պահար մեքենաներ, որունակություններ, խոյեր,  
բաղիստըներ, բարաններ, հրացան պարսեր և  
երկաթե զանազանակերպ սանդուխքներ, բար-  
ձած բաղմալուծ սայլերի վրա: Այդ ամենը  
պատրաստել էր ամել Մարզպետունի իշխանը  
դեռևս արքայի վասպուրականում եղած ժա-  
մանակ: Նրա հրամանակատարները, որոնք  
ուազմական մեքենապործության հմուտ վար-  
պետներ էին և որոնք այդ բոլորը պատրաստել  
էին կատարյալ եղանակով, այժմ էլ բանակում  
զբաղված էին նույնպիսի աշխատությամբ: Նր-

բանք կպուցանում էին փայտե շարժական աշ-  
տարակներ, կամ եռահարկ մարտկոցներ, որոնց  
պետք է մոտեցնեին քաղաքի պարիսպներին՝  
նրանց քանդելու կամ այլ մարտկոցներից քա-  
ղաքը դորք մտցնելու համար:

Բայց որովհետեւ մեքենաները պարսպին  
մոտեցնելն արդելում էր լայն ու խոր խրամը,  
որին մի քանի տեղ լցնելու համար դեռ կարիք  
կար ժամանակի, ուստի թաղավորը հրամայեց  
առաջին հարձակումն առանց մեքենաների սկը-  
սել:

Այդպիս էլ արին: Եվ որպեսզի պաշարյալ-  
ների զորությունը ցրեն, հայերը հարձակվեցան  
քաղաքի ամեն կողմերից: Այնպես որ հաղարա-  
ցիք բոլոր շրջապատի հետ կույելու համար,  
ստիպված էին մարտկոցների պաշտպանությունը  
կիսով չափ նվազեցնել:

Հայերը, որ հայտնի էին իրեն ընտիր նե-  
տաձիգներ՝ սկսան իրանց տարափը նախ աս-  
պարափակ շարքերի ետևից տեղալ, ապա հետըզ-  
հետե պարիսպներին մոտենալով սկսան վանել  
դիմադիր հաղարցիներին: Վերջիններս, սակայն  
հղորապես կովում էին այն խմբերի հետ, որոնք

կամենում էին սանդուխքներ մոտեցնել պարբռ-  
պին։ Բացի կարթավոր երկաթյա ձողերից, ո-  
րոնք մահ էին սպառնում սանդխքավոր գորա-  
կանին, նրանց նետերն էլ քիչ չէին նեղում  
հարձակվող հայերին։

Այդպիսի մի զորեղ դիմամարտ բռնկել էր  
Դվինի ավագ դռան առաջ, ուր մի քանի մարտ-  
կոցներ պաշտպանում էին թե երկաթյա դուռը  
և թե կրկնապարիսպը։ Այդ մարտկոցները գրա-  
վելուց ետ հեշտ էր առաջին պարիսպը փրկել,  
որով քաղաքի պաշտպանությունը կարի կթու-  
լանար։ Այդ պատճառով քաջերի մի հղոր  
խումբ դործում էր այստեղ։

Բայց մարտկոցների բարձրից տեղացած-  
տարափը և նամանավանդ դյուրավառ նյութերի  
հրահոսանը թույլ չէին տալիս հայերին սան-  
դուխքներ մոտեցնել։ Այդ պատճառով հարձակ-  
վողներին օդնության հասան հրձիդ դնդերը։  
Նրանք գլխներին վահաններ բռնած և խռվի ու  
խոտի խրձիկներ գրկած՝ արադարագ անցան խր-  
րամի վրայից և պարիսպներին մոտենալով կրա-  
կեցին խռըճերը մարտկոցների առաջ։ Դրանց  
հետեւցին փայտակիրները, որոնք մի քանի

վայրկյանում ահազին քանակությամբ վայս ու  
խռիվ դիղելով կրակված խուրձերի վրա, մեծ  
հրդեհ բորբոքեցին թե պարիսպների տակ և թե  
մարտկոցների առաջ:

Բոցածավալ կրակի ջերմությունն ու ծուխը  
վանեցին մարտկոցների վրայից արաբացի զին-  
զորներին: Այն ժամանակ հրդեհից աղաս ան-  
ջրպետներում հայերն անմիջապես սանդուխքներ  
դրին և սկսան բարձրանալ պատնեշների վրա և  
այդտեղից էլ մտնել մարտկոցները:

Արաբացիք այդ տեսնելով՝ սաստկապես  
հարձակվեցան խիզախողների դեմ. բայց վերջին-  
ներին շարունակ հետեւում էին ուրիշ խմբեր:  
Զնայելով որ կրակի ջերմությունն ու ծուխը  
խեղդում էր մարդկանց, այսուամենայնիվ  
մարտկոցների վրա տեղի ունեցավ կատաղի  
ընդհարում: Հայերն ու արաբացիք կովում էին  
ինչպես վագրերի ոհմակներ. մի կողմից հան-  
դուդն հարձակումը, մյուս կողմից հուսահատ  
ընդդիմությունը՝ կոփմը դարձրել էին զարհու-  
րելի. սրեր էին, որ հարվածում էին; նիզակ-  
ներ՝ ոք շամփրում էին, վահաններ՝ որ ջախ-  
ջախովում էին և դիսկներ՝ որոնք աշնան տերե-

ների պես մարտկոցների բարձունքից թափթափ-  
վում էին աջ ու ձախ։ Եվ սակայն քաջերը  
քաջերի պատահելով՝ Երկու կողմերն էլ մնում  
էին անզարտելի։

Բայց որովհետև ընդհանման կետերում ա-  
րաբացիք հետղհետե նվազում էին և հայերը,  
ընդհակառակը, բազմանում, այդ պատճառով  
առաջին Երը վերջի վերջո նահանջեցին։ Հայերը  
տիրեցին հառաջապահ մարտկոցներին և անցան  
կրկնապարիսով։ Այդուղ խոնվող հայերի և  
անջրազետը պաշտպանող արաբացիների մեջ  
դարձյալ փոթորկեց ընհարումն։ Երկու կողմէց  
էլ կոտորած եղավ, բայց որովհետև հաղարա-  
ցիք նոր օգնություն չտացան, ուստի այսուղ  
էլ նրանք պարտություն կրեցին։ Հայերը գրա-  
վեցին կրկնապարսով տարածությունը և սկսան  
քանդել նրա ողատվարները և հետղհետե լցնել  
խրամի մեջ։

Այս անսպառ հաջողությունը, որ ուրա-  
խություն պատճառեց թե թագավորին և թե  
դանակիցներին, ստիպեց նաև Մարզպետունուն  
դոհ լինել տարած հաղթությամբ և զոքքի ույժը  
խնայելու համար՝ հարձակումը դադարեցնել։

Զորքի մեծ մասը վերադարձավ բանակ, իսկ  
մյուսը դեռ աշխատում էր կրկնապարողի վրա:  
Երեկոյան դեմ բավական մեծ տարածություն  
նրանք փլել, հատակել էին և դրա հետ միասին  
խրամը լցրել, այնպես որ հետևյալ օրը հայերը  
կարող էին մոտեցնել ներքնապարողին ոչ միայն  
մեքենաները, այլև իրայտակերտ մարտկոցները:

Բայց որովհետեւ հայերի ունեցած կորուս-  
տըն էլ աննշան չէր, ուստի արքայի հրամանով  
երկրորդ հարձակումը մի քանի օր՝ ուշացրին:  
Այդ բոլոր ժամանակ փայտահարները զբաղված  
էին Դվինի անտառում ծառեր կտրելով, խոխլ  
պատրաստելով, որոնց մի մասը բերում լցնում  
էին խթամի մեջ, որովեսղի, որքան կարելի էր,  
մեծ տարածություն ծածկեն ու հատակեն, իսկ  
մյուսը դիզում էին պարիսպների առաջ, որ-  
պեսզի ժամանակին հրդեհեն նրան:

Մի քանի օր անցնելուց ետ՝ թագավորն ու  
իշխանները որոշեցին երկրորդ հարձակումն ըս-  
կսել: Դրա համար վաղ առավոտիանից սկսան  
առաջ վարել սլարսպահար մեքենաները: Խոյերն  
ու էշ կոչվածները, որոնցով դրադվում էին ա-  
վելի քիչ մարդիկ և որոնցով միայն խրամատոներ

պիտի բացվեր, մոտեցնում էին պարկսպներին։  
Ծանրաշարժ բարանները, որոնց սպասավորում  
էին հարյուրավոր հոգիք և որոնցով ահադին  
ռումբեր էին նետում պատվարները փլցնելու հա-  
մար, կանգնեցնում էին աշտարակների առաջ։  
Թեթև բաղիստրները, որոնք խոյերի ու բարաննե-  
րի նման պատսպարաններ չունեին, և որոնցով  
երկարաբուն նետեր կամ սվիններ պիտի արձա-  
կեին շարում էին պարկսպներից բավական հեռու,  
որպեսզի պարսպից տեղացող նետերը չհասնեին  
նրանց։ Իսկ վայտակերտ մարտկոցները, որոնց  
թիվը շատ չէր, բայց իրանց հզոր կազմությամբ  
ամենաապահով պատնեշներն էին պաշտրողների  
համար, կանգնեցնում էին բուրդերի հանդես,  
որտեղից կարող էին կամուրջներ ճգել դեպի այդ  
բուրդերը, դորքեր վորխաղելնրանց վրա և կամ  
ներքին հարկում հարմարեցրած խոյերով բուր-  
դերը խրամատել։ Այդ մարտկոցներն առաջա-  
նում էին ճռչալով ու տանդաչելով, թեթևներն  
անիվների վրա, իսկ ճանրաշարժերը դլանների  
օդնությամբ։

Այդ պատրաստությունները, որոնք մի քանի  
օր տեսեցին, հաճախ խանգարում էին պաշտր-

յալները՝ մերթ հախուռն նետաձղությամբ և  
մերթ պարսատիկներից քար ու կրակ տեղալով:  
Թեպետ այդ բոլորից հայ զորականը չէր վնաս-  
վում, որովհետև գործում էր դգուշությամբ և  
շարունակ պաշտպանվելով, այսուամենայնիվ  
գործը դանդաղում էր բավական:

Յուրաքանչյուր երեկո սպարապետի հրա-  
մանով զորքերը մոտենում էին պարիսպներին,  
որպեսզի գիշերվա պահուն արարացիք վնաս  
չհասցնեին մեքենական պատրաստությանը։ Նը-  
րանք այդ կարող էին անել պարիսպներից իջնե-  
լով և դյուրավառ նյութերով։ մեքենաները  
կրակելով։

Երբ ամեն ինչ պատրաստվեցավ, թաղավոր-  
ության զորքերն առաջ վարել։

Մայիսյան առավոտ էր. մինն այն օրերից,  
որ զվարճալի է կացուցանում Դվինի շրջակայքը,  
քանի չէ ծաղել արևը, բայց որ չուտով այրում  
ու մրկում է նրա դաշտը, երբ արևը կանգնում  
է երկնակամարի վրա։

Հայոց զորքերը նոր էին սկսում ելնել բա-  
նակից և դաշնակից իշխանները նոր էին քննել  
իրանց հարձակման դիրքերը, երբ լուր հասավ

Մարզպետունուն, թե Արտաշատի մեջ խլրտումն  
է սկսվել և զորքերը միջնաբերդից իջնում են  
դեպի քաղաք: Այդ նշան էր, թե արաբացիք  
պատրաստվում են դաշտն իջնելու:

Դվինի հրամանատարները որոշում էին արել  
անսպառ հարձակվել հայերի վրա և այն՝ երկու  
կողմից, այն է՝ Դվինի և Արտաշատի: Դվինե-  
ցիք առջելից պիտի հարածկվեին չխկ արտա-  
շատցիք՝ ետևից: Այս կարդաղըությունը մեծ  
հաջողություն կունենար, որովհետև հարձակ-  
ման համար ընտրել էին ամենահաջող մի-  
ջոց. այսինքն այն վայրկյանը, երբ հայերը  
կակասեին բանակատեղը ձգել և պատնեշներից ել-  
նելով դիմել դեպի Դվին: Այդ ժամանակ նրանք  
հույս չունենալով հանդիպել որևէ հարձակման,  
ավելի անհոգ և անպատրաստ կլինեին. ըստ ո-  
րում կռիվը դեռ պիտի սկսեին մի օր հետո:

Սակայն այս ամենը դուշակեց սպարապետը  
և հրաման արտիվ զորքին՝ բանակից ելնել կա-  
տարյակ պատրաստությամբ: Բացի այդ, նա  
կարգադրեց, որ Մոկաց և իշխանն ու Վահրամ  
սեպուհը իրանց գնդերով վերջինը ելնեն բա-  
նակից և հետևապես զբուշանան, որ Արտաշատի

կողմը որևէ խլրտումն տեսած ժամանակ՝ իս-  
կույն իրանցից անջատվին և հարձակվին նրանց  
վրա։ Մյուս հառաջապահ դնդերը՝ ամենայն ա-  
պահովությամբ կարող էին ըրջափակել իրանց  
մեջ արարացիներին, եթե նրանք հանդինեին  
ելնել Դվինից։

Սեպուհն ուրախությամբ լսեց այդ կարգա-  
դրությունը և նորեն հղացավ մի հանդուզն  
միտք. այն է՝ Արտաշատից ելնողներին աստուծո-  
օգնությամբ վանելոց ետ, թափանցել, մուտ  
դործել քաղաքը։ Եվ որքան մեծ եղավ նրա  
ուրախությունը, երբ Մոկաց իշխանը, որ յուր  
ակտ աներկյուղ՝ բայց իրանից ավելի ձեռներեց  
մի մարդ էր, համաձայնվեցավ նրա հետ։ Հենց  
այս տատճառով սեպուհին ընկերացավ նաև  
Գոռ իշխանը յուր քաջարի դնդով։

Եվ իրավ, հաղիվ հայերը բանակատեղը  
թողեցին և վերջապահ դնդերը պատճենչներից  
հեռացան, առաջ Արտաշատի լայնաբերան դռնե-  
րից դուրս խուժեցին արարացիք և վայրենի ա-  
ղաղակով հայերի եռեւից ընկան։

Հայոց վերջապահ դնդերը, որոնց առաջնոր-  
դում էին Գոռը, Վահրամ սեպուհը և Մոկաց

իշխանը, և որոնք բոլե առ բոլե սպասում էին  
Արտաշատու կողմից լինելիք այդ հարձակման,  
ետ դարձան իսկույն և որոտագին աղաղակով  
դիմեցին արաբացոց վրա:

Վերջինները, որոնք չէին սպասում հայերի  
կողմից որևէ դիմագրավում, կարծես հանկար-  
ծակիի եկան, որովհետև տեսան, որ իրանց  
դաղտնիքը նախատեսնված է նրանցից: Այսուա-  
մենայնիվ շարունակեցին իրանց ընթացքը,  
մինչև որ միմյանց հանդիպելով՝ սկսան ընդ-  
հարվել:

Հայերը երեք կողմից շրջապատեցին արա-  
բացիներին, որովհետև թվով զերազանցում էին  
և սկսան նրանց հետ զորեղ դիմամարտ:

Անցավ կես ժամ, կոտորածը շարունակվում  
էր: Արաբացիք կովում էին քաջությամբ. բայց  
միևնույն ժամանակ շարունակ նայում էին դեպի  
Դվին, հուսալով, թե ահա! կրացվեն շուտով նրա  
դոները և ոստիկանի զորքը դուրս կիսութե այդ-  
տեղից հայերին չփոթելու և իրանց աջակցելու  
համար: Բայց ժամանակն անցնում էր. հայերը  
շարունակում էին իրանց ջարդը և սակայն Դվի-  
նի կողմից օգնություն չէր հասնում:

Պատճառը հետևյալն էր : Աստիկանն ու Բե-  
շիրը տեսնելով թե հայոց զորքերի մի մասը ա-  
րադությամբ շուռ եկավ ու ընկավ արտաշատ-  
ցոց վրա , իսկ մյուս մասն անշարժ սպասում  
է Դվինից Ելնողներին , զդացին , որ նրանք դու-  
շակել են արդեն իրանց դիտավորությունը , ուս-  
տի վտանգավոր համարեցին քաղաքի դռները  
բանալ և զորք հանել այդտեղից :

Իսկ Արտաշատի կողմը կովողները տեսնե-  
լով , թե դվինեցիք իրանց խոստումը չեն կատա-  
րում , բայտական երկար դիմադրելուց և բազ-  
մաթիվ զոհեր տալուց ետ , դիմադրճ եղան և  
սկսան դեպի քաղաքը փախչել :

Հայոց առաջնորդները հրամայեցին զորքե-  
րին խառնվել արտրացոց հետ և միջամուխ լի-  
նել քաղաքը : Եվ որովհետեւ առաջին օրինակը  
Գոռն ու սեպուհը տվին , ուստի զորքն աներկ-  
յուղ խառնվեցավ թշնամու հետ : Հաղարացիք ,  
որոնք իրանց գլուխները կորցրած անձերնին  
փրկելու վրա էին մտածում , չկարողացան ար-  
շելք լինել ներս խուժող հայերին : Եվ երբ բեր-  
դապահը փախչողներին ներս առած կարծելով՝  
հրամայեց քաղաքի դռները գոցել , սարսափելով

տեսավ, որ Երկաթապատ փեղիերը ջախջախվել  
են արդեն հայերի ձեռքով և թե նրանցից շա-  
տերը նոր կոտորած են ոկսել քաղաքի մեջ:

Հուսահատությունը տիրեց հաղարացիներին,  
մանավանդ, երբ զեպի վեր նայելով տեսան, թե  
միջնաբերդի վրա ծածանում է արդեն հայոց  
հաղթական դրոշակը: Ուրիմն փրկության վեր-  
ջին ազավենն էլ գրավված էր: Այդտեղ բարձ-  
րացել էր Գոռը յուր քաջերով: Որովհետեւ հար-  
ձակվող հաղարացոց թիվը բազմացնելու պատ-  
ճառով միջնաբերդի զորքերը ևս միացել էին  
նրանց հետ, ուստի բերդը մնացել էր անպաշտ-  
պան: Գոռն այդտեղի սակավաթիվ պահակները  
ջարդելով՝ գրավել էր բերդը և յուր զնդի դրո-  
շը ցցել հինավուրց դղյակի ճակատին:

Արարացիք իրանց կատարյալ պարտությու-  
նը տեսնելով՝ դինադուլ խնդրեցին: Եվ որով-  
հետեւ հայերը նույնպես հոգնել էին, ուստի  
անմիջապես կոխվը դաղարեցրին և դինաթափ  
անելով արարացիներին, քաղաքն ու բերդն առան  
իրանց հսկողության տակ:

Հաղթության լուրը հասավ հայոց բանակը  
և ուրախությամբ լցրեց ամենքին, որովհետեւ

Արտաշատի դրավկումով ոչնչանում էր այն միակ ամքությունը, որ Դվինից զառ՝ կարող էր լոտանգ սպառնալ հայոց հաջողությանը:

Հետեւալ առավոտ արքայական բանակը մոտեցավ Դվինի պարիստներին և Գևորդ սպառապետի, Վահրամ սեպուհի և Սյունյաց, Մոկաց և Աղձնյաց իշխանների առաջնորդությամբ սկսավ յուր երկրորդ և հզորադույն հարգձակումը:

Արեւ դեռ նոր էր Գեղա բարձունքը ոսկեղծում և սակայն կոխվն սկսված էր արդեն:

Նետաձիգ գնդերը իրանց նետերի տարափն էին տեղում, բաղիստրավորները սվեններ էին արձակում, պարստատիկներից՝ կրակ էին ցըրվում, բարանները ահավոր ոռումքեր էին նետում, իսկ խոյերն ու էշերը փորում, խրամատում էին պարիսպները: Ինչ վերաբերում է շարժական աշտարակներին, նրանք մարտնչում էին բուրդերի ու մարտկոցների հետ՝ մի տեղ վանելով պահակախմբերը, մյուս տեղ շարժական կամուրջներ վարսելով, երբորդ տեղում բուրդի կողերը փլելով, և այլն:

Սաստիկ և աննահանջ հարձակումը մեծ վր-

նասներ էր պատճառում պաշարյալներին, կոտորում էր զորքերը, հրդեհում էր մերձակա շինությունները և խախտում, անպիտանացնում էր ամրությունները։ Այսուամենայնիվ արաբացիք, դիմադրում էին քաջությամբ։ Նրանց նետածիղներն ու սվինավորները փոխարինում էին հայերին՝ սրանցից ստացած վնասը։ Բացի այդ, նրանք այրեցին հայոց մի աշտարակը, անպիտանացրին մի քանի խոյեր և իրանց երկաթե կարթերով ու ձողերով գլորեցին և կործանեցին բազմաթիվ սանդուղքներ և վերելակներ։

Բայց և այնպես դիմադրության եռանդը քանի գնում՝ նվազում էր պաշարյալների մեջ, մանավանդ որ նրանք ստիպված էին կռվել քաղաքի, բոլոր շրջավատի հետ։ Մի քանի կետերում հայոց հարձակումն ու հասցրած տաղնապը այն աստիճան սաստիկ էր, որ արաբացիք ստիպված էին նահանջել դեպի ներքին պատնեշները, արտաքինը թողնելով բախտի կամքին, որոնց և հայերն անմիջապես դրավեցին։

Բացի այդ սպարապետի առաջնորդությամբ կովող զորագունդը հաջողել էր քաղաքի եր-

կաթյա դոներից մինը՝ բարանից արձակված ռումբերով՝ ջախջախել, որից հետո զորականն սկսել էր դռան ետին սրահակը փորել։ Այդտեղ լցված խիճն ու ավագը դուրս հանելուց ետ, արդեն սլիտի բացվեր քաղաքի մուտքը։ Թեպետ արարացիք կարող էին նրա առաջ փայտի ու նավթի, հրդեհ բորբոքել՝ ներս խուժողներին արդելելու համար, բայց դիմադրության այդ միջոցը երկար չէր տևիլ. հրդեհի նյութը վերջի վերջո կսպառեր կամ հայոց հրշեջները կհանդցնեին նրան։

Բեշիրն այդ անդարմանելի վնասը տեսնելով՝ շտապեց իսկույն ոստիկանի ապարանքը և հայտնեց նրան, թե թշնամին կարող է շուտով ներս խուժել, ուստի խորհուրդ տվավ շտապել, ամրանալ միջնարերդում և քանի հայերը չէին խանդարում իրանց, զորքերը հետզհետե փոխադրել այնտեղ։

Նոըր ամիրան, որ չէր մոռացել թագավորի այն պատղամը, թե «Եթե ես Դիլինը բռնությամբ զրավեմ, պետք է բոլորիդ սուր քաշել տամ», սաստիկ վախեցամ, երբ զորապետի խոսքերը լսեց։

— Միջնաբերդը մեղ չի պաշտպանիլ, քանի որ  
քաղաքի պարիսպներն ու պատնեշները չեն կա-  
րողանում պաշտպանել, ասաց նա Բեշիրին. Եթե  
Արտաշատը գրաված չլինեին, այն ժամանակ  
գոնե կարելի էր հուսալ միջնաբերդի վրա, ո-  
րովհետեւ նրա գետնափորով կարող էինք ա-  
պատանել Արտաշատին, եթե անխուսափելի  
վտանգ հասներ մեղ։ Փախստյան այդ ճանա-  
պարհը փակված լինելով՝ մեծ չարիք կհասնէ  
մեղ, եթե ամրանանք միջնաբերդում։ Դրանով  
նախ՝ մենք չենք կարող ազահովել մեղ, որով-  
հետեւ հայերը կամ վերջ ի վերջո բերդը կդրա-  
վեն, կամ երկար պաշտպանով սովամահ կանեն  
մեղ. Երկրորդ՝ մենք այդ ընդդիմությամբ ավելի  
կդրդուենք մեր թշնամու զայրույթը և նա միջ-  
նաբերդը գրավելուց ետ, այլևս չի խնայիլ ոչ  
զորականին և ոչ մեր անձին։

— Ի՞նչ անենք ուրեմն, վտանգը դռան մոտ  
է, հարցրեց Բեշիրը։

Ռոտիկանը չպատասխանեց նրան. Նա աչքե-  
րը գետնին հառած մտածում էր։

— Ի՞նչ անենք, տեր իմ, սպասելու ժամա-  
նակ չկա, կրկնեց զորապետը։

— Գիտե՞ս ինչ...

— Հրամայիր:

— Քաղաքը մեր կամքով պիտի հանձնենք հայերին:

— Ինչպե՞ս... Հաղամեր այսքան կորուստն ու կոտորածը, բացականչեց Բեշիրը:

— Ով՛ որ ինայում է, մնացորդը, որքան էլ այն աննշան լինի; Նա խմաստնաբար է գործում, նկատեց ամիրան լրջությամբ. Եթե մենք համառինք, ամելի պիտի կորցնենք...

— Ուրեմն...

— Պիտի հանձնենք թաղավորին յուր մայրաքաղաքը՝ մեր զորքն ու անձը փրկելու հսմար:

Բեշիրը գլուխը կախեց և լոեց:

— Մի ժամից եմ, քաղաքի մեծ զոան աշտարակի վրա վայրահակ կախեցին մի կանաչ դրոշ, որ նշան էր, թե պաշարյաները հաշություն են առաջարկում, խնդրելով ընդ նմին հարձակում դադարեցնել:

Իսկ փոքր լինչ հետո դոները բացվեցան և երեացին նորի պատգամավորները, որոնք քաղաքի բանալիները բերում էին հայոց արքային հանձնելու:

իսկույն, սպարապետը զինադադարի փողը  
հնչել տվավ և կատաղի ընդհարումը կանգ ա-  
ռավ մի վայրկենում :

Արաբացոց պատգամավորները հասան ար-  
քայի վրանը և ոստիկանի հաշտության պատգա-  
մը հաղորդելուց ետ՝ հանձնեցին թագավորին  
բերած բանալիները :

Հետևյալ առավոտ տեղի ունեցավ հայոց  
զորքերի հաղթական մուտքը դեպի Դվին :

Ամենից առաջ ներս մտավ Գևորգ Մարգղե-  
տունին՝ Արարատյան դնդով, որ կրում էր  
սպարապետական դրոշը և գրավեց քաղաքի  
կարեռը դիրքերը՝ անսպաս խլրտումներից ա-  
սլահով լինելու համար, նրան հետևեցին դաշ-  
նակից իշխանները՝ յուրաքանչյուրը յուր զորա-  
խմբով և իշխանական դրոշով։ Ապա՝ դալիս, էր  
վահրամ սեպուհը, առաջնորդելով հեծյալ դըն-  
դերին։ Դրանց հետևում էր արքայական հեծե-  
յախումբը՝ թագավորական դրոշակով, և ապա  
ինքը, Արաս թագավորը՝ ըրջապատված յուր  
ազատազունդ թիկնապահներով։

Ամենից հետո դալիս էր Գոռ իշխանը, բա-

նակի վերջապահ դնդերով, որոնք կը ում էին  
Մարզպետունյաց տան դրութ:

Քաղաքի կարևոր կետերը բոնելուց ետ՝  
սպարապետի առաջին գործն եղավ տեղեկանալ,  
թե ո՞րտեղ է գտնվում Սյունյաց Սահակ իշխա-  
նը: Եվ երբ իմացավ, որ նա փակված է միջ-  
նաբերդում, իսկույն մի զորախմբով դիմեց  
այդտեղ և մտնելով հինավուրց դղյակը, ուր  
մնում էր իշխանը՝ և որին տակավին հսկում  
էին արարացի պահապաններ, հանեց նրան այն-  
տեղից և պատվով ու չուքով բերավ արքայի  
մոտ:

Թագավորը, տեսնելով հորաքեռորդուն ողջ  
և առողջ, ուրախացավ և փարելով իշխանին  
ասաց.

— Միայն ի պատիվ քո ազատության՝ նե-  
րում եմ ես ոստիկանին: Թող ապրե նա յուր  
ապարանքում և վայելե մեր Դվինի բարիքները:

Ապա Սյունյաց հարազատները հանդիպեցին  
միմյանց և ցնծության արտասուքն աչքներին  
փարեցին իրար: Նրանց ուրախության մասնակ-  
ցեցին բոլոր իշխանները:

Այնուհետև թագավորը Գևորդ սպարապետի

և բոլոր իշխանների ու զորքերի ուղեկցությամբ  
դիմեց ս. Գըիգորի տաճարը, գոհություն մա-  
տուցաննելու աստծուն այն մեծ հաջողության  
համար, որ նա պարզեց իրանց: Արքային դի-  
մավորեց Դիլինի հոգեռականությունը եկե-  
ղեցական շքեղ թափորով:

Տաճարից դուրս գալուց ետ Արքս թա-  
դավորը գնաց Տիկնունի կոչված պալատը, որ  
թեպետ մյուս ապարանքների նման գրաված էին  
արաբացիք, բայց սպարապետն շտապել, պատ-  
րաստել էր տվել արքայի բնակության համար:

Հետեւյալ օրն ազատեցին նաև կաթուղիկո-  
սարանը՝ \*հալպահելով այդտեղից արաբական  
պաշտոնյաններին: Դրա հետ միասին խեցին նաև  
մյուս արքայացն ազմանքներն ու աչքի ընկ-  
նող շինությունները, որոնցից ամեն մինը գրա-  
ված ուներ մի ամիրա՞ն:

Երբ Գևորդ Մարզպանունին առաջին ան-  
գամ մտավ կաթուղիկոսարանի մեծ դահլիճը,  
ուր առհասարակ դրված էր լինում հայրապե-  
տական դահույքը, զգացվեց և արտասովեց:

— Ահա! վերջապես ազատեցինք և կաթու-  
ղիկոսարանը, բացականչեց նա հուզված ձայ-

նով, բայց ո՞ւր է կաթուղիկոսը, ո՞ւր է նրա  
գահուցքը... ինչո՞ւ այդ մարդը, չհամբերեց  
այնքան, որ աստուծո աչը օդնության հաս-  
ներ...:

Նա ակնարկում էր հանգուցյալ Հովհաննես  
կաթուղիկոսին, որ յուր թույլ և կամազուքկ  
ընավորության շնորհիվ պատճառ գարձավ կա-  
թուղիկոսական դահը դեպի հեռավոր Աղթամար  
փոխադրելու:

Այսուամենայնիվ ընդհանուր ուրախությու-  
նը մեծ էր, որովհետեւ մայրաքաղաքը վերջի  
վերջո գրավվեցավ հայոց քաջերի ձեռքով:



Դատ. Խոմբագիր՝ Աշ. ԴԱԶԱԲՅԱՆ

Դ. 04894. Պատվեր 747, Տիրաժ 10,000. Ստուգագրված  
է տպագրության 29/Խ 43 թ.

---

Հայպետհրատի տպարան, Երևան, 1943

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041496

ԳԻԼ 1 Ր.

